



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական  
կենտրոնի խորհրդի 26.09.2012 թ. № 11-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

***ԳՐԱՎՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

***(AMICUS CURIAE)***

**№ 11-12-Ա**

ք.Երևան

26.09.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Ջոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված  
«Քաղաքացի Գրիգորի Վահանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 204.<sup>32</sup>-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

սալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

**Հարցի կարևորությունը.**

Դիմողի կողմից բարձրացված իրավական խնդիրը վերաբերվում է նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կարգավորմանը:

Չնայած այն հանգամանքին, որ թե՛ քաղաքացիական և թե՛ քրեական դատավարական օրենսգրքերի նոր երևան եկան, ինչպես նաև նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը կանոնակարգող մի շարք նորմերի վերաբերյալ սահմանադրական դատարանը բազմակի որոշումներ է կայացրել, այդուհանդերձ խնդիրը շարունակում է արդիական մնալ:

Նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, դատական ակտերի վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման հետ միասին, հանդես են գալիս որպես գործերի լուծման օրինականության ստուգման միջոց և ուղղված են արդարադատության իրականացմանը՝ օրինական և պատճառաբանված դատական ակտեր կայացնելու միջոցով:

Սույն հարցն իրենից լուրջ կարևորություն է ներկայացնում արդարադատության մատչելիության առումով:

**Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).**

Սույն միջամտության շրջանակներում Կենտրոնն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել այն հարցադրմանը՝ թե որքանով է

վիճարկվող նորմով նախատեսված իրավական կարգավորումը համապատասխանում արդարադատության մատչելիության սկզբունին.

**I. Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի (այսուհետ՝ Վիճարկվող նորմ) համաձայն՝

*Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝*

*1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.*

2. Նոր երևան եկած հանգամանքն ըստ էության իրենից ներեկայացնում է ***իրավաբանական փաստ***, որը՝

- գործի քննության ժամանակ օբյեկտիվ իրականության մեջ արդեն իսկ գոյություն է ունեցել, սակայն հայտնի չի եղել և չէր կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և դատարանին, կամ էլ հայտնի է եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չի ներկայացվել դատարանին,
- տվյալ գործի համար ունի կարևոր նշանակություն, այսինքն՝ հանգեցնում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որոշակի իրավահարաբերության առաջացմանը փոփոխմանը կամ դադարեցմանը:

3. Ընդ որում՝ նոր երևան եկած հանգամանքի առկայությունն ինքնին դատարանի համար գործի վերանայման վարույթ հարուցելու հիմք չէ: Անհրաժեշտ է նաև դատարանին ապացուցել, որ այդ հանգամանքները գործի քննության ժամանակ հայտնի չէին և չէին կարող հայտնի լինել (կամ դատարանին չեն ներկայացվել անձի կամքից անկախ պատճառներով) և գործի լուծման համար ունեն էական նշանակություն:
4. Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է և առանձնահատուկ, այդ պատճառով յուրաքանչյուր գործով նոր երևան եկած հանգամանքի էական լինելու հանգամանքը որոշելիս, դատարանները պետք է հաշվի առնեն վերանայվող գործի բոլոր փաստերը և պարզի թե ***արդյո՞ք այդ հանգամանքներն իրենց բնույթով ազդում են վերանայվող գործի ելքի վրա, թե ոչ:***
5. Վիճարկվող նորմի սահմանադրականության հարցի բացահայտման համար անհրաժեշտ է այդ դիտարկել արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում:
6. 18-րդ հոդվածի համաձայն՝
- Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:*
- Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:*
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված*

*հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:*

*Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:*

7. 19-րդ հոդվածի համաձայն՝

*Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:*

*Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել:*

8. Սահմանադրական այս դրույթը բխում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ **Կոնվենցիա**) 6-րդ հոդվածի 1-ին մասից, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ,

*ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ռոջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

9. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է արդարադատության մատչելիության իրավունքը, այսինքն՝ իր քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով *դատարան դիմելու իրավունքը*:
10. Կոնվենցիայի 13-րդ հոդվածը նախատեսում է՝ *յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:*
11. Իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առանձնակի կարևորությամբ է օժտված արդարադատության մատչելիության (դատական պաշտպանության) իրավունքը, քանի որ այն իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի՝ դատարանի կողմից՝ օրենսդրությամբ հստակ սահմանված ընթացակարգով:
12. Այս իրավունքը բնութագրվում է որպես անձի՝ հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ՝ որպես այլ իրավունքների իրականացման և պաշտպանության երաշխիք:

13. Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովվումը պետությունն առաջին հերթին իրականացնում է այդ իրավունքների ու ազատությունների լիարժեք իրացումը երաշխավորող իրավապաշտպան մեխանիզմների միջոցով: Որպես նման մեխանիզ է հանդիսանում Սահմանադրությամբ յուրաքանչյուր անձին դատական պաշտպանության իրավունքով օժտելը և այդ իրավունքի իրացման համար դատական ատյաններ ստեղծելը:
14. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն (**այսուհետ՝ Եվրոպական դատարան**) իր նախադեպային որոշումներում անդրադարձել է արդարադատության մատչելիության իրավունքին: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերլուծության արդյունքում գտել է, որ այն ներառում է նաև **դատարանի մատչելիության իրավունքը**՝ չնայած այն հանգամանքին, որ այն հստակորեն ամրագրված չէ Կոնվենցիայում:
15. Եվրոպական դատարանը, վկայակոչելով Կոնվենցիայի նախաբանում արտահայտված **իրավունքի գերակայության սկզբունքը**, ընդգծել է, որ քաղաքացիական հարցերի կապակցությամբ դժվար է խոսել իրավունքի գերակայության մասին, եթե բացակայում է դատարան դիմելու հնարավորությունը:
16. Ըստ Եվրոպական դատարանի, **դատարանի մատչելիության սկզբունքն իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքն է** և եթե նշված հոդվածով չպաշտպանվեր նաև դատարանի մատչելիության իրավունքը, ապա պայմանավորվող պետությունները կարող էին, չխախտելով այդ հոդվածը, դատարանների իրավա-

գորությունից բացառել որոշակի կատեգորիայի քաղաքացիական հայցեր և դրանց քննության իրավասությունը վերապահել գործադիր իշխանությունից կախվածության մեջ գտնվող մարմինների:

**Եզրակացություն.**

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Կենտրոնը գտնում է, որ Վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներին:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան